

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2017

12-դասարան

Պատասխաններ

1. Իր անունը ստացել է հռոմեացիների Մարս աստծուց , որին պատկերում էին ահեղ տեսքով, գլխավերևում՝ կայծակ, որովհետև մարտ ամիսը Իտալիայում զուգորդվում է որոտների, շանթերի, փոթորիկի, հորդառատ անձրևների հետ: Մարսը պատերազմի ահեղ աստվածն է : Երախտապարտ հռոմեացիները այս աստծուն նվիրում էին գայլ, կաղնի, փայտփորիկ: Մոլորակներից մեկը կոչեցին նրա անունով՝ Մարս:

2. Անի- աստվածային քաղաք, հազար ու մեկ եկեղեցիների քաղաք,քրիստոնեական միջնաբերդ

3.Հռոմի գորավար և պետական գործիչ Կատոն Երեցի արտահայտությունն է (մ.թ.ա.234-149 թթ.), որով նա ավարտում է սենատում արտասանած բոլոր ճառերը: Այժմ օգտագործվում է որպես կոչ՝ դժվարությունները հաղթահարելու համար, նաև երբ բնութագրվում են մեկի համառությունը, համոզվածությունը և կամքը:

5. մոմակալ-աշտանակ

խորտիկ-ուտեստ

կիտար-պախարա

բեղ-ընչացք

դաջել-դրոշմել

խունկ-կնդրուկ

6. մատռվակ-խմիչքեղենը տնօրինող, մատուցող սպասավոր

տիկ-գինի լցնելու համար կենդանիների մորթուց տոպրակ

կոչնակ-եկեղեցի հրավիրող կոչ

օշարակ- մրգահյութի քաղցր կամ թթվաշ ըմպելիք

7. ընչագուրկ-ինչ(ք) -ի>ը

ըմպելիք-ումպ-ու>ը

ընչացք-ունչ-ու>ը

դունչ-ընդ+ունչ

9. Արքայաձոր, Արքայակաղնի(կաղին) վանք, Արքաշեն(լեռնագագաթ Գեղամա լեռներում), Արքեղայոս եպիսկոպոս, արքայանարինջ, արքայախնձոր,արքայամայր

*Հանրապետական օլիմպիադայի նախագահ՝ մ.գ.թ., դոցենտ*

*Գ. Խալաթյան*